ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1447-Ա « 18 » մարտի 2026թ.

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
18.03. 2026թ.
հ. 1447-Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	Աշոտ Ավագյան	Նոր Խարբերդի 12-րդ փողոց, հ.22	հողամաս	Աշոտ Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող, Նոր Խարբերդի 12-րդ փողոցի հ.22 հասցեում գտնվող հողամասի /վկ. հ.07032026-01-0007/ մնացորդային 355.4քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Նոր Խարբերդի այգեգործական տարածք, 12-րդ փողոց, հ.95	01113BTUCLYK	
2	Աշոտ Ավագյան	Նոր Խարբերդի 12-րդ փողոց, հ.22	հողամաս	Աշոտ Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող, Նոր Խարբերդի 12-րդ փողոցի հ.22 հասցեում գտնվող հողամասի /վկ. հ.07032026-01-0007/ բաժանման հատակագծով առանձնացվող 131.1քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Նոր Խարբերդի այգեգործական տարածք, 12-րդ փողոց, հ.95/1	01113CQ9XLKV	
3	Նարեկ Միեր Պարսումեան, Գէորգ Պարսումեան, Զեփյուռ Մարտոյեան	Շահումյանի անվան նախկին կոլտնտ., հ.70	բնակելի տուն	25.02.2026թ. հ.ԱՇԹԴ/7/1855-26 ավարտական ակտի /շահագործման թույլտվություն/ համաձայն, Նարեկ Միեր Պարսումեանի, Գէորգ Պարսումեանի, Զեփյուռ Մարտոյեանի կողմից Շահումյանի անվան նախկին կոլտնտ. հ.70 հասցեում կառուցված բնակելի տանը /հիմք՝ ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության 03.03.2026թ. հ.42/94/2/57793-26 տեղեկանք/ տրամադրել հասցե՝ Նոյ թաղամաս, հ.70	01073USLDBNZ	
4	Սևակ Մանուկյան	Հաղթանակ թաղամաս, հ.48-5	հողամաս	Սևակ Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Հաղթանակ թաղամասի հ.48-5 հասցեում գտնվող հողամասին /վկ.հ.11092023-01-0239, Երևանի քաղաքապետի 10.01.2024թ. հ.75-Ա որոշում/ տրամադրել հասցե՝ Հաղթանակ թաղամաս, 1-ին փողոց, 7-րդ փակուղի, հ.44	01073LNYJR4G	

5	Սևակ Մանուկյան	Հաղթանակ թաղամաս, հ.48-5	հողամաս	Սևակ Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Հաղթանակ թաղամասի հ.48-5 հասցեում գտնվող հողամասին /վկ.հ.18092023-01-0376, Երևանի քաղաքապետի 22.01.2024թ. հ.191-Ա որոշում/ տրամադրել հասցե՝ Հաղթանակ թաղամաս, 1-ին փողոց, 7-րդ փակուղի, հ.42/1	01073EMDTU4S	
6	Էդուարդ Համբարձումյան /լիազորված անձ/ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	Խ. Աբովյան փողոց, հ.38 շենք, հ.34/1	տարածք	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, Խ. Աբովյան փողոցի հ.38 շենքի հ.34/1 հասցեում գտնվող տարածքի /վկ. հ.03032026-01-0388/ բաժանման հատակագծով առանձնացվող 268.5քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Խ. Աբովյան փողոց, հ.38 շենք, շինություն հ.34/2	01063Y9QJCMP	
7	Ռաֆայել Գևորգյան /լիազորված անձ/ Համլետ և Վահագն Գևորգյաններ	Իսահակյան փողոց, հ.42/3	ավտոտնակ	Համլետ և Վահագն Գևորգյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, Իսահակյան փողոցի հ.42/3 հասցեում գտնվող ավտոտնակի /վկ. հ.05032026-01-0449, հող. 56.7քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 9.8քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Ա. Իսահակյան փողոց, հ.42/8	01063PLB4EGV	
8	Անժելա և Ալբերտ Համբարձումյաններ	Հաղթանակ թաղամաս, 1-ին փողոց, հ.1/284 և հ.1/278	բնակելի տուն և հողամաս	Անժելա և Ալբերտ Համբարձումյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, Հաղթանակ թաղամասի 1-ին փողոցի հ.1/284 և հ.1/278 հասցեներում գտնվող բնակելի տանը և հողամասին /վկ. հ.19122025-01-0262 և հ.19122025-01-0206/ տրամադրել մեկ միասնական հասցե՝ Հաղթանակ թաղամաս, 1-ին փողոց, 9-րդ նրբանցք, հ.56/2	0107368KTZVZ	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ